21.03.25 - 22.03.25
10:00
Անցանց
Գրանցումը փակ է
☐

Պահպանել Google օրացույցում
ԵՊՀ Պալեանների անվան դահլիճ

Ս.թ. մարտի 21-ին և 22-ին՝ ժամը 10:00-ին, ԵՊՀ Պալեանների անվան դահլիճում տեղի կունենա «Հիդրոօդերևութաբանության և շրջակա միջավայրի մոնիթորինգի արդի հիմնախնդիրները փոփոխվող կլիմայի պայմաններում. հարմարվողականություն, կայունություն և արտադրական գործընթաց» խորագրով գիտաժողով։

Գիտական այս միջոցառման նպատակն է քննարկել հիդրոօդերևութաբանության, շրջակա միջավայրի մոնիթորինգի և էկոլոգիական անվտանգության ապահովման բնագավառում հիմնարար և կիրառական գիտական հետազոտությունների զարգացման ձեռքբերումներն ու հեռանկարները, բացահայտել և վերհանել հիդրոօդերևութաբանության ոլորտում առկա խնդիրները, զարգացման օրինաչափությունները և հեռանկարները, գնահատել վերջինիս դերը տարածաշրջանի սոցիալ-տնտեսական խնդիրների լուծման գործում, վերլուծել և գնահատել շրջակա միջավայրի արդի վիճակը, կլիմայի փոփոխության հիմնահարցերը։

Գիտաժողովի շրջանակում կքննարկվեն նաև ժամանակակից հասարակության զարգացման և էկոհամակարգի իրավական կարգավորման տնտեսակառավարման հիմնախնդիրները, ինչպես նաև բնապահպանական և հիդրոօդերևութաբանական կրթության գերակա խնդիրները։

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1
(+37460) 710000
info@ysu.am